

Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ԵՈՒՐՁ

Վան քաղաքում շինարարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ ասուրերենով գրված առաջին սեպագիր արձանագրությունը պատկանում է Վանի թագավորության արքա Սարդուրիին¹: Սույն արձանագրությունը հիմք ընդունելով՝ որոշ հետազոտողներ նրան համարել են Տուշպա-Վան մայրաքաղաք-ամրոցի հիմնադիր², ինչպես նաև, Արամեի արքայական հարստությունից զանազանելով, Վանի՝ որպես արքայական հարստության սկզբնավորող³: Եթե նախկինում Սարդուրիի գահակալության ժամանակաշրջանը աներկբա թվագրվում էր Արամեից հետո՝ մոտավորապես մ.թ.ա. 845-825 թթ.⁴, ապա ներկայումս հետազոտողները միակարծիք չեն Արամեի և Սարդուրիի գահակալության հանգամանքների և ժամանակաշրջանի, ըստ այդմ՝ նաև բիայնական պետության վաղ շրջանի իրադար-

¹ Սարդուրիի արձանագրությունում եշում է Ալմիունուից քարերն այստեղ բերելու և պարիսպը կառուցելու մասին (տե՛ս Lehmann-Haupt C. F., *Corpus Inscriptionum Chaldicarum*, VII, Berlin-Leipzig, 1928-1935, N 1-3, Salvini M., *Corpus dei testi urartei* (այսուհետև՝ CTU), vol. I, Roma, 2008, A 1A-1F):

² Տե՛ս Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 137-138: Ն. Ադոնցը Սարդուրիին համարում է Արամեի որդի գտնելով, որ վերջինիս մականունն էր *Լուրիպրի* (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 186, 194):

³ Арутюнян Н. В., *Византизм (Урарту)*, Ереван, 1970, էջ 120-123, Կարագեոզեան Յ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր տեղանուններում, Երևան, 1988, էջ 27-28: Շուտ Գ. Մելիքիշվիլու Տուշա քաղաքի տիրակալները դարձել են Վանի թագավորության արքաներ, իսկ Վանը մայրաքաղաք (տե՛ս Меликишвили Г. А., *Наши Урарту*, Тбилиси, 1954, էջ 202, 230):

⁴ Ֆ. Քյոնիգը հավանական է համարում և Լուրիպրիին որպես Արամեից զատ, Արամեին ժամանակակից առանձին արքա դիտարկելը և *Լուրիպրին* Արամեի կոչում համարելը (König F. W., *Handbuch der chaldischen Inschriften* (այսուհետև Hchl), Bd. VII, Craz, 1955/1957, S. 1, N 1a-c):

ձուրթունների թվագրման հարցում⁵: Պատմագրության մեջ, վերոհիշյալ թնջուկի վերաբերյալ, առաջինն իր վարկածներն է առաջարկել ականավոր գերմանացի հայագետ, արևելագետ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը: Հեղինակը Վանի թագավորության մ.թ.ա. 9-րդ դարի իրողությունների վերականգնման մեկնակետ է ընտրել Տուշպայի ամրոցի կառուցումը և ենթադրել՝ երկու տարբերակ:

Ըստ Կ.Ֆ.Լեման-Հաուպտի, «առաջին հայացքից» հնարավոր է Իշպուհնի հորը՝ քիայնական և ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող Սարդուրի-Մեդուրին, նույնացնել Վանա ամրոցը կառուցող Սարդուրիի հետ և նրա գահակալության ժամանակաշրջանը թվագրել Արամեից հետո: Նման համադրության դեպքում հեղինակը Վանա ամրոցի կառուցման պատճառ է համարում այն հանգամանքը, որ Սարդուրին, ասորեստանյան արքա Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.)՝ գահակալության երրորդ տարում՝ մ.թ.ա. 856 թ., հյուսիսից իրագործած արշավանքից հետո⁶, երբ Սալմանասարը գրավել էր Վանա լճի հյուսիսային և հյուսիսարևելյան որոշ շրջաններ՝ այդ թվում Արամեի արքայական քաղաք Արծաշքուն⁷, նման կառուցապատում է իրականացրել՝ հյուսիսից սպասվող նոր արշավանքը կասեցնել:

⁵ Տե՛ս Գրեկյան Եր., Տուշպա քաղաքը և քիայնական (ուրարտական) պետության կազմավորման որոշ հարցեր, «Հայաստանի մայրաքաղաքները, I, Վան», Երևան, 2013, էջ 48-49: Մ. Սալվինին կարծում է, որ ի դեմս Արամեի, ասորեստանյան արձանագրություններում նշվում է ոմն արամեացի իշող, քիայնական տերության հիմնադիրը եղել է արամեացի և միայն հետագայում իշխանությունը Սարդուրի I-ի օրոք անցել է քիայնական արքայատոհմին (տե՛ս Salvini M., *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, էջ 26-27, 35):

⁶ Տե՛ս Grayson A. K., *Assyrian Rulers of the Early First Millennium BC II (853-745 BC)*, *The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods*, vol. III, Toronto-Buffalo-London, 1996, (այսուհետև՝ RIMA), A.O.102.2, ii 47b-56a, ii 56b-60a:

⁷ Տե՛ս Lehmann-Haupt C. F., *Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens (Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-Historische Klasse, Neue Folge Band IX, Nro 3.)*, Berlin, 1907, էջ 35 (16, 17), 41 (7, 8):

լու համար⁸: Սույն տարբերակի դեպքում, ըստ հեղինակի, Վանը մայրաքաղաք է դարձել հետագայում՝ Սարդուրիի որդի Իշպուի-նիի օրոք:

Լեման-Հաուպտը կարծում է, որ Տուշպայի ամրոցի քարե-րը տաբերվում են իրենց բնույթով տեղակեցի հումքից և, հիմք ընդունելով Սարդուրիի արձանագրության մեջ եշված Ալևիունուից քարերն այստեղ բերելու հանգամանքը, գտնում էր, որ քարերն այստեղ են բերվել նավերով՝ Վանա լճի հյուսիսային շրջաններից⁹: Հեղինակը ենթադրում էր, որ Մանազկերտ քաղաքը հնում անվանվել է Ալևիունի¹⁰: Հետևաբար, ըստ հեղինակի ենթադրելի է, որ պարսպի շինանյութը Վան է բերվել Մանազկերտից, կամ՝ Վանա լճով ավիամերձ հյուսիսային այլ բնակավայրերից¹¹: Հետագայի Մանազկերտ անվանումը Լեման-Հաուպտը համարում

⁸ Տե՛ս Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt (այսուհետև՝ AEF), Bd. II/1, Berlin-Leipzig, 1926, էջ 21:

⁹ Հեղինակը որպես օրինակ նաև նշում էր պատմիչ Թովմա Արծրունու երկում արտացոլված միջնադարյան համանման անցքերը (տե՛ս AEF, Bd. II/1, էջ 20): Գազիկ Արծրունու՝ Մանավազյան քաղաքից Վան տաշած քարեր բերելը, ինչպես նաև Աղձնիքի Կոտոմի ամրոցից Վանա լճով Աղթամարի եկեղեցու քարերի բերումը (տե՛ս Թովմա Արծրունի և Անանու, Պատմություն տան Արծրունեաց, Երևան, 1985, էջ 391, 461):

¹⁰ Ս. Երեմյանը Ալևիունին տեղադրում է Աղիովյազ գավառում (տե՛ս Երեմյան Ս., Ուրարտու պետությունը 860-590 թթ. մ.թ.ա., Երևան, 1980 թ. (քարտեզ)):

¹¹ Տե՛ս AEF, Bd. II/1, S. 20: Բ. Պիտտրովսկին նշում է, որ դժվար է միանշանակ համաձայնել Լեման-Հաուպտի այս ենթադրությանը, սակայն հստակ է, որ քարերն այստեղ են բերվել այլ վայրից (տե՛ս Пётровской Б.Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 58-59): Ս. Մալվինին, հավանական է համարում Ալևիունու քաղաքի և ըստ այդմ՝ ավելի հին իշխանական կետերնուի տեղորոշումը Նաիրի-Խուրուշկիայում, իսկ ամրոցի քարերի տեղափոխումը՝ Վանից ոչ հեռու գտնվող քարահատարակից: Ըստ հեղինակի՝ Ալևիունու անվանումը իր քերականական կառուցվածքով համապատասխանում է Մուգունիա և Արծաշկուն(ու) տեղանունների (տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 35-36):

էր Մենուայի անունից ծագած, քանի որ Մենուան այստեղ գտնվող ամրոցը վերակառուցել է¹²:

Համաձայն Լեման-Հաուպտի առաջարկած երկրորդ տարբերակի՝ հարկ է Վանա ամրոցի հիմնադիր Լուֆիպրիի որդի Մարդուրիին գանազանել քիայնական և ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող Իշպուինիի հայր Սարդուր-Սեդուրից: Ըստ այդմ, հեղինակը Լուֆիպրիի որդի Սարդուրիի գահակալությունը հավանական է համարում տեղի ունեցած Արամեից առաջ՝ Աշուրնաձիբապալ II-ի (մ.թ.ա. 883-859 թթ.) թագավորության տարիներին¹³: Հեղինակը նման թվագրման համար հիմք է ընդունել այն, որ Սարդուրիի տիտղոսաշարը խիստ նման է Աշուրնաձիբապալ II-ի տիտղոսաշարին և արմատապես տարբերվում է քիայնական հաջորդ արքաների տիտղոսաշարերից¹⁴: Ըստ հետազոտողի՝ նախկինում միմյանց հետ թույլ կապված նաիրյան քաղաքական միավորները Լուֆիպրիի որդի Սարդուրիի օրոք արդեն միավորվել էին մեկ պետության մեջ¹⁵: Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, նշելով Սարդուրիի տիտղոսերն արձանագրության մեջ՝ «աշխարհի արքա, արքաների արքա», գտնում է, որ նա է եղել նաիրյան առաջխաղացման շարժիչ ուժը Աշուրնաձիբապալ II-ի օրոք: Լուֆիպրիի որդի Սարդուրին, գիտակցաբար կրելով ասորեստանյան արքայի տիտղոսաշար, փորձել

¹² Պատմահայր Մովսես Խորենացին ավանդում է, որ Հայկի ժառանգներից Մանավազը ժառանգեց Հարթը (տե՛ս Մովսես Խորենացի (այսուհետև՝ Մովսես Խորենացի), Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 36):

¹³ Այս տարբերակն, ինչպես հեղինակն է նշում, իր համար առավել հավանական է (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 21, 24):

¹⁴ Ն. Ադունցը քննադատում է Լեման-Հաուպտին, երկու արքաների տիտղոսաշարերի նմանությամբ պայմանավորված նման եզրակացություն կատարելու համար, սակայն Լեման-Հաուպտը միայն այդ փաստարկը չէ, որ բերում է (տե՛ս Ադունց Ն., նշվ. աշխ., էջ 186-187):

¹⁵ Տե՛ս AEJ, Bd. I, Berlin, 1910, էջ 13:

է նաև այդ կերպ վիճարկել Աշուրնաժիրապալի աշխարհակալական հավակնությունները¹⁶:

Վանա ժայռի հարավային կողմում իր և Վ.Բելլի հայտնաբերած ժայռափոր որմնախորշի աջ և ձախ կողմերի մասամբ ընթեռնելի արձանագրությունը նույնպես Լեման-Հաուպտը թվագրում է Սարդուրիի գահակալության ժամանակաշրջանով¹⁷: Արձանագրությունում, ինչպես իրավացիորեն նշում է նա, ասորերենով թվարկվում են զոհաբերվող կենդանիները, սեպերի ոճը նման է Սարդուրիի արձանագրությանը, իսկ բովանդակությունը՝ Միերի դռանը: Արքայի կամ աստծո անուն արձանագրությունում պահպանված չէ: Լեման-Հաուպտի հայտնաբերած այս արձանագրությունը տևական ժամանակ մնաց հետազոտողների ուշադրությունից դուրս:

Հետագայում Մ.Սալվինին, օգտագործելով Լեման-Հաուպտի արձանագրության պատճենը, ենթադրեց, որ սույն տեքստն աղերս չունի բիայնական արձանագրությունների հետ. այս որմնախորշը և արձանագրությունը կարող են պատկանել Սարդու-

¹⁶ St u Lehmann, C. F., *Šar kiššati, "Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete"*, Bd. 8, Weimar, 1896, S. 200, 202: Գ. Վիլհելմը, քննելով վերոհիշյալ արձանագրությունը, եկել է այն եզրակացության, որ Սարդուրիի արքայական տիտղոսաշարն ու մակդիրները համապատասխանում են Աշուրնաժիրապալ II-ի տիտղոսաշարի հետ, իսկ մնացածում արձանագրությունն աղերսվում է նոր ասորեստանյան եամակառճի և բարբառի (խոսվածքի) հետ: Ըստ հետազոտողի՝ արձանագրության կազմող սերել է Ասորեստանի հյուսիսային շրջանի քաղաքներից, մասնագիտությամբ եղել եամակագիր, տիրապետել է նախորդ տասնամյակների արքայական արձանագրությունների որոշ կարևոր ձևակերպումներին: Տուշպա է բերվել ռազմական արշավանքի ժամանակ, կամ՝ սեփական ցանկությամբ (տե՛ս Wilhelm G., *Urartu als Region der Keilschrift-Kultur*, in: V. Haas (Hrsg), *Das Reich Urartu. Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr.*, "Xenia", 17, Konstanz, 1986, էջ 106):

¹⁷ St u Lehmann-Haupt C. F., *Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens*, էջ 63, Fig.41, *AEJ*, Bd. II/1, S. 26-28, CTU, vol. I, A1-2:

րի I-ին, կամ էլ՝ քիչ հավանականությամբ, ասորեստանյան որևէ արքայի, քանի որ հետագայում այն կջնջվեր¹⁸: Ի. Դյակոնովը, սակայն, քննելով արձանագրության տեքստը և քննադատելով Մ.Սավլինիին, եզրակացնում է, որ արձանագրությունում առկա է աղերս նոր ասորեստանյան խոսվածքի հետ և բնորոշ է գոհաբերության կարգ սահմանող բիայնական տեքստերին¹⁹:

Ըստ այդմ, եթե իրավացի է Լեման-Հաուպտը, ապա Լուծիպրի որդի Սարդուրիի ժամանակաշրջանով թվագրվող այս արձանագրությունը, կարող է վկայել արդեն նրա օրոք Վանի թագավորությունում գոյություն ունեցող գոհաբերության կարգի ու նաև՝ աստծո, կամ՝ աստվածների՝ պետական քաղաքականության ծիրում ներառման մասին:

Լեման-Հաուպտը միաժամանակ, հիմք ընդունելով ասորեստանյան արձանագրությունների տվյալները, կարծում էր, որ Աշուրնաձիրապալ II-ի օրոք տեղի է ունեցել նաիրյան պետության առաջխաղացում դեպի Ասորեստանին պատկանող հյուսիսային շրջաններ²⁰:

¹⁸ St' u Salvini M., Eine vergessene Felsinschrift mit einem assyrischen Opfertext, "Societies and Languages of the Ancient Near East (Studies in honor of I. M. Diakonoff)", Warminster, 1982, էջ 331, Salvini M., Le pantheon de l'Urartu et le fondement de l'etat, "Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente antico", vol. 6, 1989, էջ 83:

¹⁹ St' u Дьяконов И. М., О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах, "Древний Восток", 5, Ереван, 1988, էջ 157-159:

²⁰ Հեղինակը նման եզրակացության համար հիմք է ընդունում այն, որ ասորեստանյան արքա Աշուրնաձիրապալ II-ի գահակալության 2-րդ տարում որպես նրա արքայական քաղաք է նշվում Դամդամուսան, իսկ արդեն 18-րդ տարում՝ Ջամանուխի Իլանիի ամրոցը: Ջամանուխ հարավում Նաիրյան չորս շրջաններից մեկն էր (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 21, 395): Գ. Մելիքիշվիլին Լեման-Հաուպտին քննադատելով՝ նշում է, որ այս իրադարձություններին ուրարտական տիրակալների մասնակցության վերաբերյալ տվյալներ չկան, և իրականում ընդլայնվել են Բիտ Ջամանիի իշխանության սահմանները (տե՛ս Меликшвили Г. А., նշվ. աշխ., էջ 201, ծան. 1), սակայն այս տարբերակում Լեման-Հաուպտը քաղաքական դերակատարություն վերապահում է միայն Նաիրյան պետությանը:

Ըստ նրա՝ ոչ միայն Սալմանասար I-ի, այլև Աշուրնաձիրապալ II-ի գահակալության տարիներին, նախքան նրանք միացած արևմուտքից Միջագետք ներխուժող սեմերին՝ արամեացիներին, զգալի առաջխաղացում են ունեցել հարավում՝ նախկինում Ասորեստանին պատկանող տարածքում²¹: Աշուրնաձիրապալ II-ը Միջագետքում և Եփրատի միջին հոսանքում արամեական քաղաքները նվաճելուց հետո իր ուշադրությունը կենտրոնացրեց Սիրայի ուղղությամբ, որտեղ առաջնորդող դերակատարություն էր ստանձնել Դամասկոսը²²: Դամասկոսի և Համաթի կռալիցիան, որը ձգվում էր մինչև Փոքր Ասիա, իր հերթին Հայաստանում նաև օժանդակություն էր որոնում:

Համաձայն Լեման-Հաուպտի, ըստ այդմ հարկ է պատճառական կապ տեսնել Սալմանասար III-ի՝ արամեացիների դեմ, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի կատարած արշավանքների միջև²³: Սալմանասար III-ին հաջողվեց կասեցնել հայկական լեռնականներին (*der armenischen Bergvölker*) և նրանց հետ միավորված արամեացիներին, չեզոքացնել ասորեստանյան «միջնաբերդի» վրա կախված վտանգը²⁴: Հաջորդ դարերի ընթացքում նույնպես բիայնական արքաները Ասորեստանի թշնամիների՝ հատկապես Հյուսիսային Ասորիքի (Սիրիա) արամեական պետությունների հետ դաշնակցային հարաբերություններ էին պահպանում:

²¹ St`u AEJ, Bd. I, էջ 13:

²² St`u Lehmann-Haupt C.F., *Israel-Seine Entwicklung im Rahmen der Weltgeschichte*, Tübingen, 1911, էջ 72, 75:

²³ Ասորեստանի ռազմաստրատեգիական հետաքրքրությունները հյուսիսում և արևմուտքում միմյանց հետ շաղկապված էին, որը արտացոլված է ինչպես արձանագրություններում, այնպես էլ պատկերներում (տե՛ս Schachner A., *Bilder eines Weltreichs, kunst- und kulturgeschichtliche Untersuchungen zu den Verzierungen eines Tores aus Balawat (Imgur-Enlil) aus der Zeit von Salmanassar III, König von Assyrien*, "Subartu" 20, Turnhout, 2007, էջ 227-228):

²⁴ St`u AEJ, Bd. I, էջ 443:

Ասորեստանյան արքա Աշուրնաձիրապալ II-ն իր արձանագրություններից մեկում նշում է, որ նվաճել է Սուբևատ գետի ակունքներից մինչև Ուրարտու երկիր ընկած տարածքը: Սուբևատը Լեման-Հաուպտը տեղորոշում է Միջագետքում՝ Նինվեից Տուր-Աբդին ճանապարհին՝ Արևմտյան Տիգրիսի մոտ²⁵: Աշուրնաձիրապալ II-ի համանման տեքստերում Ուրարտու անվան փոխարեն նշվում է Նիրբու անունը: Հետազոտողը նախապես ենթադրում էր, որ ասորեստանյան արձանագրություններում, ի դեմս Ուրարտու անվան ամենահին վկայության, պետք է հասկանալ Արարտ/դ/ի լեռները²⁶: Հեղինակը չի բացառում նաև, որ Ուրարտու անվան վկայությունը կարող է լինել ասորեստանյան չափազանցության արդյունք. նրանք Միջագետքին հարող շրջանի անունն օգտագործել են իրենցից հյուսիս գտնվող երկրի և բնակչության համար²⁷:

«... Ըստ Լեման-Հաուպտի՝ Աշուրնաձիրապալ II-ին այդպես էլ չհաջողվեց Հայաստանի կենտրոնական շրջաններ ներխուժել,

²⁵ St u Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, էջ 22:

²⁶ St u AEJ, Bd. I, էջ 443: Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto-Buffalo-London, 1991, A.O. 101.1, i 54b-58a, A.O.101.30, 1-20a, Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВНИУ)՝ «Вестник древней истории», Москва, 1951, N 2-4, 23-24: Նիրբու կամ Նիրիբ կարող է նշանակել նաև լեռնանցք (տե՛ս նույն տեղում, ծան. 4): Լեման Հաուպտը Նիրիբին տեղորոշում է որպես երկիր՝ *Արարտի* լեռների հարավային կողմում, որին միջագետքյան դաշտավայրը հյուսիսում սահմանակցում է (տե՛ս AEJ, Bd. I, էջ 443): Պատմահայր Մովսես Խորենացու երկում Հայկի և Բելի մասին շարադրանքում կարդում ենք «յետ ծնանելոյ գորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ զեայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմ հիւսիսայ» (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 33): Նշենք, որ բնագրի տարբերակներում այստեղ առկա է Արարատ ձևը:

²⁷ St u AEJ, Bd. II/2, Berlin-Leipzig, 1931, էջ 847-851: Ըստ Մ. Սալվինիի՝ այստեղ ասորեստանյան սկզբնաղբյուրում Ուրարտուս նշվում է որպես ընդհանուր աշխարհագրական անվանում (տե՛ս Salvini M., Urartu. A. Geschichte, "Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie", Bd.145/6. Lief., 2015, էջ 390):

քանի որ Մարդուրին ասորեստանյան արշավանքները կասեցնելու համար կառուցել էր Վանա ամրոցը: Ամրոցի պաշտպանական նշանակությունը կարևորվում էր պաշարման ժամանակ, որի ընթացքում նյութական ապահովումը իրականացվում էր նաև լճի մյուս ափից²⁸: Հետագոտողը կարծում էր նաև, որ ամրոցը պաշտպանում էր նաև Մարդուրիի հիմնած նավահանգիստը²⁹:

Ըստ Լեման-Հաուպտի հայեցակարգի՝ Արամեի օրոք, ում հայերը որպես իրենց հերոս և տիրակալ են մեծարում³⁰, տեղի է ունեցել իշխանական փոփոխություն. իշխանությունը Հայկական լեռնաշխարհում նաիրյան պետական միավորից անցել է բիայնական (խալդյան) հարստությանը³¹: Հեղինակը հետագայում փորձել է բիայնական արքաների տիտղոսաշարում «Նաիրի երկրների արքա» տիտղոսի բացակայությանը նման հիմնավորում տալ³²: Սույն տեսակետի համար կովան էր համարվում նաև այն հանգամանքը, որ Արամեի օրոք պետության մայրաքաղաքն Արծաշքուն էր և միայն ավելի ուշ բիայնացիներն իրենց

²⁸ Տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 20, 22:

²⁹ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում էր, որ այն ժամանակ Վանա լճի մակարդակն ավելի ցածր է եղել, և նավահանգիստը ամրոցից մեկ կիլոմետր հեռու է եղել. լճի մակարդակի տատանումների ժամանակ ջուրը գրեթե ամրոցին է հասել (տե՛ս նշվ. աշխ., էջ 18):

³⁰ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 43-44:

³¹ Տե՛ս AEJ, Bd. I, S. 13:

³² Տե՛ս Lehmann-Haupt C. F., *Das urartäisch-chaldische Herrscherhaus*, "Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete", Bd., 33, Berlin-Leipzig, 1921, էջ 28- 29: Լեման-Հաուպտը նշում է, որ, այնուամենայնիվ, Լուրիպրիի որդի Մարդուրիին և Արամեին վերջնականապես տարբեր քաղաքական միավորների ներկայացուցիչներ համարելու համար բավար փաստեր չկան, և հնարավոր է, որ Լուրիպրիի որդի Մարդուրիի տիտղոսաշարի համար հիմք են հանդիսացել Աշուրնա-ծիրապալի արդեն հայտնի արձանագրությունները և նրա արձանագրությունները կարող են Սալմանասարի գահակալության տարիներին շարադրված լինել (AEJ Bd. II/1, էջ 24):

տիրապետությունը տարածեցին Հայկական լեռնաշխարհի հարավային և Վանա լճի արևելյան շրջանների վրա³⁵:

Հարկ նշել, որ Սալմանասար III-ի գահակալության առաջին տարվա արշավանքի ժամանակ Արամեի պետության հարավային շրջանում նշվում է Սուգունիա բնակավայրը³⁴: Սուգունիա բնակավայրի տեղորոշման շուրջ առկա են տարաբնույթ կարծիքներ, սակայն բոլոր դեպքերում էլ հետազոտողներն այն տեղորոշում են Հայկական լեռնաշխարհի հարավային Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած հատվածում³⁵: Այս հանգամանքը կովան է ենթադրելու, որ արդեն Արամեի քաղաքական իշխանության ոլորտում ընդգրկված են եղել Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները³⁶:

Սալմանասար III-ի գահակալության երրորդ տարվա մ.թ.ա. 856 թ. արշավանքին վերագրվող բանաստեղծական տեքստերից մեկում նշվում է, որ արքան հարկ է ստացել Տուրուշպա քաղաքից³⁷: Սույն արշավանքի նկարագրությունում, Արամեի պետության կենտրոնական շրջաններում՝ մայրաքաղաք Արծաշքուի հարևանությամբ, նշվում է Արամալու քաղաքը³⁸:

³⁵ Չեղինակը կարծում է, որ Սալմանասար III-ի օրոք բիայնացիները բնակվում էին Տիգրիսից հյուսիս, հյուսիս-արևելք և Արածանիի շրջակայքում, իսկ մայրաքաղաք Արծաշքուն գտնվել է Վանա լճից հյուսիս (տե՛ս AEJ, Bd. II/ 2, էջ 595, 679, 851):

³⁴ Տե՛ս RIMA, vol. III, A.0.102.1, 29b-33a, 33b-40a, A.0.102.2, i23b-25a, A.0.102.28, 10b-18a:

³⁵ Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 79, Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 55, Арутюнян Н. В., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 171, Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 28:

³⁶ Տե՛ս Пиотровский Б., նշվ. աշխ., էջ 60:

³⁷ Տե՛ս RIMA, vol. III, A.0.102.17 (57):

³⁸ Տե՛ս АВВИУ, N 27 (II-54), RIMA, vol. III, A.0.102.2, ii56b-60a: Ա. Ֆուքսը կարծում է, որ Արամալին այստեղ նշվում է որպես քաղաք, որը չունի սեփական արքա և ուղակիորեն աղվերսում է Արծաշքուի շուրջն ընկած բիայնական կենտրոնի ամայացման հետ (տե՛ս Fuchs A., Urartu in der Zeit, Biainili-Urartu,

Արծաշքուի վերաբերյալ արձանագրության տեղեկությունների վերլուծությունը հետազոտողներին բերել է ոչ միանշանակ եզրահանգումների³⁹։ Տուշպայի (Տուրուշպա) հիշատակությունը հնարավորություն է տալիս նաև ենթադրություն կատարել Դայենիից արշավանքի հավանական երթուղու շուրջ։ Ասորեստանյան գործը, Դայենի երկրից շարժվեց Արծաշքու, անցավ Ադուրու⁴⁰ և Էրիտիա լեռները⁴¹ և ավերեց Արամալու քաղաքն ու նրա շրջակա քաղաքները, այնուհետև շարժվեց Ջանգիունա քաղաք, Նաիրի երկրի ծով և Գիլգանու երկիր⁴²։ Գիլգանու երկիրը տեղորոշվում է Ուրմիա լճի հարավարևմտյան հատվածում⁴³։ Տուրուշպա քաղաքից հարկ ստանալու իրողությունը ենթադրելի է,

The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007. "Acta Iranica" 51, Peeters, 2012, էջ 159):

³⁹ Ն. Ադոնցը կարծում է, որ Արծաշքուն հետագայի Մանագլերոս է, իսկ Արամալին (Արամեի տիրույթ) հարկ է տեղորոշել Ապահուսիքում, Ջանգիունը, Ադիովխտում (տե՛ս Ադոնց, Ն., նշվ. աշխ., էջ 85, 354)։ Ս.Երեմյանը Արծաշքուն Արճեշը, Ալեխուսին, Ռիարն ու Արբուն տեղորոշում է Վանա լճից հյուսիս և հյուսիս-արևելք գտնվող Արամայրայի շրջանում (տե՛ս Երեմյան Ս., Ուրարտու պետությունը 860-590 թթ. մ.թ.ա.)։ Բ.Պիտրովսկին Արծաշքուն տեղորոշում է Արածանիի վերին հոսանքի շրջանում Դիադիևի մոտ, Գ. Մելիքիշվիլին Ուրմիա լճի հյուսիսարևմտյան հատվածում, Ն. Հարությունյանը՝ Արճկեում (տե՛ս Пиотровский Б. Б., նշվ. աշխ., էջ 55, Меликшвили Г. А., նշվ. աշխ., էջ 32, Арутюнян Н. В., Биайнили (Урарту), էջ 108)։ Մ. Սալվինին Արծաշքուն տեղորոշում է Ուրմիա լճից հարավ կամ՝ հարավ-արևմուտք (տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 31)։ Ը. Կրոլը, քննադատելով Սալվինիի տեսակետը, նշում է, որ Արծաշքուն Վանա լճից հյուսիս՝ Արածանիի շրջանում, կամ՝ արևելք տեղորոշելը, շարունակում է մնալ արդիական (տե՛ս Kroll St., Salmanassar III. und das frühe Urartu, Biainili-Urartu, էջ 167)։

⁴⁰ Ենթադրվում է, որ Ադուրու լեռը Միփանն է և Լույսական և քիայնական արձանագրություններում հիշատակվող ³³³Eiduru-ի հետ (տե՛ս Арутюнян Н.В., Топонимика Урарту, էջ 12-13, СТУ, vol. I, էջ 70)։

⁴¹ Էրիտիան հիշատակվում է Սարգոն II-ի արձանագրությունում Իրտիա ձևով (տե՛ս АВИИУ, N 49(233))։

⁴² Տե՛ս RIMA, vol. III, A.O.102.2, ii 47b-56a, ii 56b-60a, ii 60b-63a։

⁴³ Տե՛ս Reade J. E., Hasanlu, Gilzamu, and related considerations, "Archäologische Mitteilungen aus Iran", Bd. 12, 1979, էջ 175-181։

որ տեղի է ունեցել արքայական քաղաք Արծաշքունի ավերումից հետո՝ ըստ այդմ Ադուրուից Արամալու-Ջանգիունա ճանապարհին⁴⁴, ասորեստանյան զորքը Վանա լճի հյուսիսային շրջաններից շարժվել է Տուշպա, այնուհետև՝ Գիլգան:

Լեման-Նաուպտն առանձին քննության չի ենթարկել Սալմանասար III-ի այն արձանագրությունները, որոնցում համատեղ նշվում են Արծաշքուն և Արամալեն, թեպետ նրա օրոք սույն արձանագրություններն արդեն հրատարակված էին⁴⁵:

Սարգոն II-ի գահակալության 8-րդ տարվա՝ մ.թ.ա. 714 թ., արշավանքի նկարագրությունում Արմարիլի մարզում հիշատակվում են Ռուսայի հայրենական քաղաք Արբուն և Սարդուրիի քաղաք Ռիարը, որի շրջակայքում ապրում էին նրա 7 եղբայրները⁴⁶: Չնայած արձանագրությունում հստակ չէ, թե որ Սարդուրիի մասին է խոսքը⁴⁷, սակայն ակնհայտ է, որ Արամեի պետության կենտրոնական շրջանները և Ռուսայի ու Սարդուրիի հայրական քաղաքների գտնվելու վայրը՝ Արմարիլին, նույնական են⁴⁸: Լեման-Նաուպտը *Արամարիլին* տեղորոշում է իր ժամանակի պարսկա-թուրքական սահմանից արևմուտք՝ *Բազի* վայրի և Արճիշակի միջև՝ ենթադրելով նաև, որ Արամարիլին կարող էր Արճիշակից ավելի հեռու տարածվել⁴⁹: Չարկ է նաև

⁴⁴ Վ. Լամբերթն Արծաշքուն տեղորոշում է Վանա լճի հյուսիսում, իսկ Գիլգանը՝ Ուրմիա լճի արևմտյան ափի երկայնքով. արշավանքի երթուղին անցկացնում է Դայենիից Արածանիի ակունքներով Ուրմիա լճի հյուսիս-արևմուտք, այնուհետև՝ Վանա լճի հարավարևելյան շրջաններ և դարձյալ Գիլգանով Ասորեստան (տե՛ս Lambert W. G., *The Sultantepe Tablets: VIII. Shalmaneser in Ararat, "Anatolian Studies"*, vol. 11, 1961, էջ 155-157):

⁴⁵ Տե՛ս Schrader E., *Keilinschriftliche Bibliothek*, Bd. I, Berlin, 1889, էջ 128-174:

⁴⁶ Տե՛ս АВИИУ, N 49(269):

⁴⁷ Տե՛ս Lehmann-Haupt C. F., *Das urartäisch-chaldische Herrscherhaus*, էջ 42-43:

⁴⁸ Տե՛ս Арутюнян Н.В., *Топонимика Урарту*, էջ 38:

⁴⁹ Տե՛ս AEJ, Bd. II/1 էջ 319:

նշել, որ Արամալի-Արմարիլի նշանակում է «գարմիկ այրերի նահանգ», «իշխանական»⁵⁰:

Արդի տվյալների համադրության դեպքում՝ համաձայն Լեման-Հաուպտի առաջարկած առաջին տարբերակի, ենթադրելի է, որ Արամեի իշխանության ներքո գտնվում էր նաև ապագա Տուշպա մայրաքաղաքը⁵¹: Տուշպա քաղաքից Սալմանասար III-ի հարկ ստանալու իրողությունը հավանաբար հանդիսացել է Լուրիպրիի որդի Սարդուրիի կառուցապատում իրականացնելու պատճառներից մեկը: Սարդուրիի՝ արձանագրությունում բիայնական արքաներին բնորոշ «տերը Տուշպա քաղաքի» տիտղոսը չհիշատակվելու հանգամանքը, և ընդհանրապես Տուշպա քաղաքի անվան բացակայությունը ևս հուշում են, որ բիայնական պետության համար Տուշպան դեռևս չէր ստացել մայրաքաղաքի նշանակություն⁵²:

Երկրորդ տարբերակի համաձայն՝ Լուրիպրիի որդի Սարդուրին արդեն Աշուրնաձիրապալ II-ի օրոք իր քաղաքական իշխանության սահմաններում ընդգրկել էր Տուշպան, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները: Տերության

⁵⁰ Տե՛ս Նաչատրյան Վ., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Երևան, 2012, էջ 93: Ա. Ֆուքսը Արամեի անունն աղերսում է Արամալե-Արմարիլի տեղանվան հետ, որը 856 թ. տերության կենտրոնական շրջաններից էր, և Արամե անունը նշանակում է «տերը Արամալեի», որը Լուրիպրիի տիրադատ է եղել: Հեղինակը նշում է, որ այս անունն ասորեստանյան արձանագրություններում հանդես է գալիս որպես Արամե, իսկ բիայնականներում՝ էրիմեսա ձևով: Ա. Ֆուքսը համարում է, եթե այնուամենայնիվ Լուրիպրի անունը կրող առանձին գահակալ եղել է, ապա նա պիտի գահակալած լինի մ.թ.ա. 844-830 թթ. (տե՛ս Fuchs A., նշվ. աշխ., էջ 159-160):

⁵¹ Տե՛ս Kroll St., նշվ. աշխ., էջ 167:

⁵² Սարդուրին արձանագրությունում կրում է «*MAN GAL-e MAN dan-nu MAN ŠU MAN^{KUR} na-i-ri*» տիտղոսը (տե՛ս CTU, vol. I, A 1A-1F 1-2), այս տիրադատով է հանդես գալիս Բշպուրիին Քելիշիի երկլեզվյա արձանագրությունում և նրա տիրադատաշարում բիայնական և ասորական տեքստերում, արդեն տեղ է գտել նաև «*[MAN^{KUR}] bi-a-i-na-ü -e a-lu-si^{URU} su-uš-pa-a [URU]*», «*[MANGAL]-ü MAN dan-nu MANŠU MAN^{KUR}Na-i-ri GAR^{URU} tu-uš-pa-a-[an URU]*» տիտղոսը (տե՛ս CTU, vol. I, N 3-11 19, 16):

կենտրոնը նրա հաջորդ Արամեի օրոք շարունակում էր գտնվել Վանա լճից հյուսիս ընկած շրջանում: Ենթադրությունը, որ բիայնացիները Արամեից հետո հաստատվեցին Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում, չի համապատասխանում իրականությանը: Հարկ է նշել, որ Լեման-Հաուպտն այս տարբերակում իրավացիորեն պետականության կազմավորումը Հայկական լեռնաշխարհում Արամեից վաղ է թվագրում: Համաձայն արդի ուսումնասիրությունների՝ Արամեի օրոք գոյություն ունեցող պետականությունը ոչ թե նոր էր կազմավորվում, այլ ավելի խոր արմատներ ուներ⁵³: Լուծիպրիի որդի Սարգուրիին Աշուր-նսադիբապալի ժամանակակից համարելը՝ պայմանավորված տիտղոսաշարով, և Արամեի ու Սարգուրիի իշխանությունների գրաված տարածքի տարբերությամբ դեռևս մնում է առկախ: Երկու տարբերակներում էլ հեղինակը Տուշպան դիտարկում է որպես տերության ապագա մայրաքաղաք:

Մի կողմից Սալմանասար III-ի արձանագրությունում Արծաշքուի որպես արքայական քաղաքի և Արամալիի համատեղ նշվելը, իսկ մյուս կողմից՝ Սարգոն II-ի տարեգրությունում վկայված Արմարիլիում արքայական քաղաքների գտնվելը, վկայում են, որ ըստ սեպագիր աղբյուրների պատմաաշխարհագրական բնույթի տվյալների, Արամեի տերության կենտրոնական շրջանները և իրեն հաջորդած թագավորների տոհմական տիրույթները նույնական են:

⁵³ Սալմանասար III-ի Բալավաթյան դարպասի բրոնզե պատաստներում պատկերված է կավե կարասի տեղափոխումը որպես ռազմավար: Այն իր ռճով հիմնականում նման է Ռուսախիևիլիի պահոցի մեծ կարասներին՝ 500-600 լիտր տարողությամբ (տե՛ս AEF, Bd. II/2, էջ 467, 560): Շ.Վրոլը, հիմք ընդունելով այս պատկերը, կարծում է, որ Արամեի օրոք Վանի թագավորության ամբողջությունը պահվել են հազարավոր նման անոթներ, ինչը վկայում է, որ նրկրի պահուստային տնտեսությունն արդեն ձևավորված էր (տե՛ս Kroll St., նշվ. աշխ., էջ 168, Fuchs A., նշվ. աշխ., էջ 138):

Համաձայն հեղինակի առաջարկած երկու տարբերակների՝ Լուիթպրիի որդի Սարդուրիի իշխանության կենտրոնական շրջանները գտնվել են Վանա լճի հյուսիսում և հետագայում, Վանա ամրոցի կառուցմամբ, պայմանավորված ասորեստանյան վտանգով, նա իր քաղաքական ազդեցությունն ամրապնդել է հարավում: Ըստ հեղինակի քննարկած նյութերի՝ Վանա ամրոցի կառուցմամբ, Սարդուրին Ասորեստանի հետ ռազմական առճակատման տարածքն ավելի հարավ էր տեղափոխում: Համաձայն Լեման-Հաուպտի հայեցակարգի՝ Սարդուրին այստեղ իրականացրել է համակարգային կառուցապատում՝ հեռահար նպատակներ հետապնդելով: Մայրաքաղաք Արծաշքուի Վանա լճից հյուսիս տեղորոշելը և ըստ այդմ՝ Լեման Հաուպտի ենթադրությունը, պետականության ծավալումը Վանա լճի հյուսիսային շրջաններից դեպի հարավ, շարունակում է պահպանել իր գիտական արդիականությունը:

ВАГЕ САРГСЯН

КОНЦЕПЦИЯ К. Ф. ЛЕМАНА-ХАУПТА ПО ВОПРОСУ ФОРМИРОВАНИЯ ВАНСКОГО ЦАРСТВА

РЕЗЮМЕ

Первая клинописная надпись на ассирийском языке относительно осуществления строительной деятельности в городе Ван принадлежит царю Ванского царства Сардури. К.Ф. Леман-Хаупт, как исходную точку для восстановления истории Ванского царства 9-го века до н. э, принял надписи Сардури, сына Лутипри. По мнению исследователя, строительство крепости способствовало распространению государственности на Армянском нагорье от северных областей озера Ван к южным. К. Ф. Леман-Хаупт прав-

диво предполагал, что к Сардури необходимо переписывать только строительство Ванской крепости, а Тушпа в дальнейшем при Ишпуини стала столицей государства. Концепция Леманн-Хаупта о расширении государственности на Армянском нагорье и в настоящее время сохраняет свою актуальность.

VAHE SARGSYAN

THE CONCEPT OF C. F. LEHMANN-HAUPT ON THE
FORMATION OF THE KINGDOM OF VAN

SUMMARY

The first Assyrian cuneiform inscription on the construction activities carried out in Van belongs to king Sarduri of the Kingdom of Van. C. F. Lehmann-Haupt regarded the inscription of Sarduri, son of Lutipri, as a starting point for the reconstruction of the history of the 9th c. BC of the Kingdom of Van. According to the scholar, the construction of the castle by Sarduri conduced to expanding the statehood southward from the northern regions of Lake Van in the Armenian Highland. C. F. Lehmann-Haupt rightly considered only the construction of the castle of Van could be ascribed to Sarduri while Tushpa became the capital of the state later, already during the reign of Ishpuini. The concept of Lehmann-Haupt on the expansion of statehood in the Armenian Highland maintains its relevance up to day, too.